ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Կ. Պետոյան

«------»----------2023 թ.

ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ

VII Գ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Գալոյան Ռոզա Վարդանի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանուն

«2023-2024» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում են 21 աշակերտներ՝ 6 աղջիկ և 15 տղա: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ջերմ միմյանց հետ փոխհարաբերություններում և համախմբված բոլոր հարցերում: Դասարանում մշտապես տիրում է առողջ մթնոլորտ, բոլորն ընկերասեր են, աշխատասեր և նպատակասլաց:

Որպես դասարան միասնական են ու կազմակերպված: Սիրում են մեկմեկու, պատրաստակամորեն օգնության ձեռք են մեկնում մեկը մյուսին: Դասարանի յուրաքանչյուր աշակերտ վառ անհատականություն է, բազմակողմանի զարգացած: Սիրում են արվեստն ու մշակույթը: Յուրաքանչյուր աշակերտ կարևորում է իր դիմացինի կարողությունները և նրան ընդունում որպես այդպիսին: Միմյանց կապում է բարոյական նորմերի կանոնների սկզբունքայնությունը՝ մի՛ ստիր, մի՛ խաբիր, մի՛ բամբասիր:

Դասարանի աշակերտները մասնակցել են 2022-23թթ. «Կենգուրու», «Մեղու» խաղ-մրցույթներին, մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադայի դպրոցական փուլին, Koreez համադպրոցական առցանց մրցույթին: Դասարանի աշակերտները մասնակցել են նաև «Գյոթեի ինստիտուտի» *DSD I գերմաներենի լեզվական մակարդակի վկայական ստանալու քննություններին, որի արդյունքում Մաթոսյան Ալլան և Վարդանյան Աստղիկը ստացել են A2 մակարդակի Գյոթեի վկայական: Մասնակցություն են ունեցել համադպրոցական միջոցառումներին:*

Նրանք բարի, հետքրքիր, դաստիարակված անձնավորություններ են: Ունեն լավ ծնողներ, ովքեր հետևողական են, ուշադիր, օգնում են ամեն հարցում: Վերը նշվածները հատկանիշներ էին, որոնք բնութագրական են դասարանում սովորող յուրաքանչյուրի աշակերտի:

Դասարանի ակտիվն ընտրված է ըստ արժանվույն, վայելում է մյուսների հարգանքը: Որոշումներում նախաձեռնող է, որը ընդունվում է բոլորի կողմից:

Դասարանի ճանաչողական մակարդակը լավ է: Աշակերտներից յուրաքանչյուրը գիտակցում է ՀՀ օրենսդրության պահանջները կատարելու, ազգային և բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտությունը: Ունեն արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում:

Դասարանն աչքի է ընկնում կազմակերպվածությամբ, կարգապահությամբ, գիտելիքների պատրաստվածությամբ, սովորելու ցանկությամբ: Աշակերտները աշխատասեր են, նպատակասլաց, հետաքրքրասեր իրենց ուսումնասիրած առարկաների նկատմամբ:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխանքները

Ուսումնադաստիարակչական աշխատանքները պետք է տարվեն բոլոր ուղղություններով՝ ձևավորելով հայրենասեր, խելացի և նվիրյալ քաղաքացիներ: ՈՒսումնական տարվա ընթացքում ձեռնարկվող քայլերն ու իրականացվող միջոցառումները պիտի նպաստեն աշակերտների կարողությունների ձևավորմանը, նրանց գեղագիտական ճաշակի, ազնիվ ու պարկեշտ մարդ-անհատի, հայրենասեր ու գիտակ քաղաքացու ձևավորմանը: Ուսումնադաստիարակչական աշխատանքները ճիշտ կազմակերպելու նպատակով պետք է հետևել աշակերտների վարքին և ուսման առաջադիմությանը: Երեխաների աշխատասիրությունն ու նպատակասլացությունը բարձրացնելու համար ոգևորիչ մրցույթներ կազմակերպել՝ դասարանում ստեղծելով առողջ մրցակցություն: Հրավիրել ծնողական ծողովներ, հետևել աշակերտների անձնական հիգիենային և կարգապահությանը:

«Ոչ մի դաստիարակ չի կարող երեխայի հոգում հաստատել լավը, եթե ինքը՝ երեխան, չի ձգտում դրան: Բայց այդ ձգտումը կա այնտեղ, որտեղ կոլեկտիվն ու դաստիարակն երեխայի մեջ ամենից առաջ տեսնում են լավը»:

/ Վ. Ա. Սուխոմլինսկի/

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակությունը բոլոր մանկավարժների համատեղ գործունեության արդյունքն է՝ուղղված երեխաների հոգևոր զարգացմանը: Այն առնչվում է սովորողների ներդաշնակ և ընդհանուր զարգացումն ապահովող մանկավարժության մյուս ձևերի հետ: Հոգևոր դաստիարակությունը բարդ գործընթաց է, որը սերտորեն կապված է երեխային շրջապատող սոցիալական միջավայրի հետ:

Ուսումնական աշխատանքներին զուգահեռ հոգ տանել աշակերտների հայեցի դաստիարակության մասին: Հոգևոր դաստիարակությունը աշակերտներին սովորեցնում է լինել բարի, համբերատար, մեծահոգի և զիջող:

3.2 - Գեղագիտական դաստիարակություն

Բարոյահոգեբանական դաստիարակությունը կոչված է ձևավորելու և զարգացնելու դպրոցականների գեղագիտական ճաշակը, ինչպես նաև վերաբերմունքը մարդու և հասարակության կենսագործունեության նկատմամբ: Գեղագիտական դաստիարակությունը սերն ու հարգանքն է գեղեցկության նկատմամբ: Բազմաբնույթ միջոցառումների միջոցով անհրաժեշտ է զարգացնել գեղագիտական ճաշակը, սովորեցնել ճանաչել գեղեցիկը:

3.3 - Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Մշտապես ուշադրության կենտրոնում պետք է պահել նաև աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Աշակերտներին դաստիարակել հայրենասիրական ոգով, Գ. Նժդեհի գաղափարախոսությամբ: Կարդալ մեծերի խոսքերից հայրենասիրության վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմակերպել միջոցառումներ, դասեր, հրավիրել ազատամարտիկների՝սեփական օրինակով և պատմություններով երեխաներին ոգեշնչելու: Ծանոթացնել ազգային հերոսների և հայոց բանակի անցած ուղուն:

3.4 - Ֆիզիկական դաստիարակություն

Աշակերտների ընդհանուր զարգացման գործընթացն առաջին հերթին պայմանավորված է ֆիզիկական զարգացման աստիճանով: Միայն ֆիզիկապես առողջ և առույգ երեխայի հոգեկանն է ենթակա լիարժեք զարգացման: Ֆիզիկական դաստիարակության կարգախոսը Ժան Ժակ Ռուսոյի <<Առողջ մարմնում, առողջ հոգի>> ձևակերպումն է:

3.5 - Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը մանկավարժական գործընթաց է՝ ուղղված աշխատանքի հանդեպ գիտակցված վերաբերմունքի, աշխատանքի արդյունքը գնահատելու կարողության և աշխատելու պահանջմունքի ձևավորմանը: Սեփական փորձով և ծնողների օրինակով տեսանելի դարձնել աշխատանքի արդյունքում ստեղծված հանրօգուտ հետևանքը: Աշակերտների մոտ ձևավորել սեր և հարգանք աշխատասիրության նկատմամբ: Աշակերտը համոզմունքով պիտի ընդունի, որ բնատուր ընդունակություններից ավելի կարևոր է մարդու աշխատասիրությունը:

3.6 - Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտի բնապահպանական դաստիարակությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը բխում է <<մարդ-հասարակություն-բնություն>> փոխազդեցության պահանջներից: Այն միտված է երեխայի մեջ շրջապատող բնական աշխարհի, երևույթների, նրա օրենքների և օրինաչափությունների մասին գիտելիքների և պատկերացումների, բնաճանաչողական ընդունակությունների ձևավորմանը:

3.7 - Դպրոց-ընտանիք կապը

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հերաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միության նկատմամբ վստահության փոխադարձ հարգանքի, փոխօգնության և համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	Կազմակերպչական հարցեր (դասարանի ավագի ընտրություն, դասագրքերի բաշխում, հերթապահության սահմանում)։ Ծանոթացում դպրոցի տարահանման պլանին	Սեպտեմբեր	Դասղեկ, աշակերտներ
II	Աշակերտների հետ զրուցել 2022-2023 ուստարում «Ֆոտոնի» և նրա սաների ունեցած հաջողությունների մասին		
III	Զրույց «Իսկական երջանկության իմաստը»		
IV	«Դարերի խորքից» խորագրով զրույց		
V	Զրույց «Ի՞նչ եք անում դուք այսօր, որ վաղը ուժեղ լինեք, ուժեղ՝ հոգեպես, ֆիզիկապես, ունենաք «ուժեղ միտք», լավ զարգացած կամք, խոսք …»		
VI	Դոստոևսկու մի քանի խորիմաստ մտքերը …	Հոկտեմբեր	
VII	Այց Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն , ներկայացում «Մաուգլի»		
VIII	Այց «Զվարթնոց հայկական վաղմիջնադարյան ճարտարապետական հուշարձան», «Մաչանենց տուն»		
IX	Սթիվ Ջոբս «Աշխարհի վեց լավագույն բժիշկները»	Նոյեմբեր	
X	Զրույց «Բոլորը հետ են վերադառնում»		
XI	Զրույց «Հայտնի մարդիկ երեխաների մասին»		
XII	Զրույց «Ցավեր կան, որ պիտի ապրես …»		
XIII	Կա՛նգ առ, ակնթա՛րթ. . . (երկրաշարժից տարիներ անց)	Դեկտեմբեր	
XIV	Զրույց «Ծովեր և օվկիանոսներ»		
XV	Զրույց «Ի՞նչ գույն ունի ….»		
XVI	Ամանորյա միջոցառումների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում		

XVII	Շալվա Ամոնաշվիլիի 10 «Ոչ»-երը	Հունվար	Դասղեկ, աշակերտներ
XVIII	Զրույց «Ինչպե՞ս մեծացնել երջանիկ երեխա»		
XIX	Զրույց՝ «Կրակեք ժպիտով »		
XX	Զրույց «Իսկ դուք գիտե՞ք, որ …»	Փետրվար	
XXI	Գրքերի աշխարհում		
XXII	Ինձանից խորհուրդ «Ուժեղ եղեք, մի հիասթափվեք ու բարձրացեք վերև, ինչքան էլ ձեզ քննադատեն»		
XXIII	Զրույց «Ի՞նչ է ընտանիքը»		
XXIV	Մաթեմատիկայի հայերեն անվանումը	Մարտ	
XXV	«Պի» թվի օրը: Էնշտեյնի երջանկության տեսությունը		
XXVI	Զրույց «Դու աճում ես այն ժամանակ, երբ …» թեմայով		
XXVII	Զրույց «Ծիծաղի օր» և «Մանկական գրքի օր» թեմաներով	Ապրիլ	
XXVIII	Զրույց «Ցանկացած իրավիճակում ոչնչից և ոչ մեկից մի՛ վախեցիր» թեմայով		
XXIX	«Մեզ բացակա չդնեք…»		
XXX	Եղեռն: Այցելություն «Ծիծեռնակաբերդ»		
XXXI	Զրույց «Չմոռանաս, համեստ լինելը միշտ «մոդա»-ի մեջ է»	Մայիս	
XXXII	Թանգարանների համաշխարհային օր /այցելություն Գյումրիում գործող թանգարաններ/		
XXXIII	«Յոթ Աղբյուր»-ի գաղտնիքները		
XXXIV	Զրույց՝ «Ինչպես եմ գնահատում իմ աշխատանքը այս ուսումնական տարում»: 2023-24 ուստարվա ընթացքում ձեռքբերումների և թերությունների մատնանշում, արդյուքների վերլուծում և գնահատում		

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը
01. 09. 2023թ.	Գրի և դպրության օր	«Ֆոտոն» վարժարան

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻ

N	Նախասիրական-առարկայական խմբակ	Գեղարվեստական, երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1.	ռուսերեն			
2.	անգլերեն	հարվածային գործիքներ		
3.				
4.	անգլերեն		դյուդո	
5.			գիմնաստիկա	
6.				Թումո
7.			ըմբշամարտ	
8.	անգլերեն, գերմաներեն			Թումո, ծրագրավորում
9.				
10.			սամբո	Թումո
11.	գերմաներեն			ծրագրավորում
12.	գերմաներեն	շեփոր		ծրագրավորում
13.			ըմբշամարտ	.
14.	անգլերեն		ֆուտբոլ	ծրագրավորում
15.				
16.			ակրոբատիկա	
17.				
18.	անգլերեն, գերմաներեն			ծրագրավորում
19.				
20.		դաշնամուր, կիթառ, պար		
21.	անգլերեն		սուսերամարտ	Թումո

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օ/ա/տ	Միջոցառման բովանդակությունը	Ծանոթություն

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

I ԿԻՍԱՄՅԱԿ		*II ԿԻՍԱՄՅԱԿ*	
Շաբաթվա օրը	*Դասաժամը*	*Շաբաթվա օրը*	*Դասաժամը*
Շաբաթ	*8*	*Շաբաթ*	*8*

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
07.09.2022թ.	1. Դասարանի ծնողական խորհրդի ձևավորում 2. Դրես կոդ 3.Կազմակերպչական այլ հարցեր / նախագծային աշխատանք, դասագրքերի պակաս, դասասենյակի գույքի պահպանում, բացակայություններ, …/	1. Դասագրքերի բաշխում 2. Նոր ուսումնական առարկաների, խմբակների հետ ծանոթացում 3. Դասարանական ծնողական ակտիվի ընտրություն	

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1. Երեխաների թիվը դասարանում՝ 21
ա) աղջիկ՝ 6

բ) տղա՝ 15

2. Ընտանիքների թիվը
ա) լրիվ կազմով՝ 20

բ) ոչ լրիվ կազմով՝ 1

3. Անապահով ընտանիքներ
թիվը՝
4. Նրանցում՝ երեխաների
թիվը՝

5.Բազմազավակ ընտանիքների թիվը՝ 7
6. Նրանցում՝ երեխաների թիվը՝ 3 երեխա

7.«Ռիսկային խմբի» ընտանիքների թիվը՝

8. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում՝

9.Խնամակալության տակ գտնվող երեխաների թիվը՝

10.Դասերից հաճախակի բացակայող երեխաներ՝

11.Դժվար դաստիարակվող երեխաներ՝

Դասղեկ՝ Ռոզա Գալոյան